Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, ևս պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՎԻՈԼԱ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի, երրորդ անձ՝ <<Իմունոֆարմ>> ՍՊԸ-ի՝ <<ՔՖԻ-ԳՀԱՊՁԲ-25/64>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրության՝ 6.2 կետով 1-ին չափաբաժնով <<ՎԻՈԼԱ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունների արձանագրման մասին որոշումը, 6.3 կետով 1-ին չափաբաժնով <<ՎԻՈԼԱ>> ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը, 8-րդ կետով 1-ին չափաբաժնով <<Իմունոֆարմ>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ <<ՔՖԻ-ԳՀԱՊՁԲ-25/64>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին 1-ին չափաբաժնով <<ՎԻՈԼԱ>> ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատել և 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից <<ՎԻՈԼԱ>> ՍՊԸ-ին ճանաչելը պարտավորեցնելու պահանջների մասին **հայցը մերժել**:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

5. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում։

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IED9-2615-4685-B0DB հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am